և յորդորեաց զամենեսին յետս կալ յայնպիսի վրդովմից գործոյ և բաժանելոյ զԱթոռ Լուսաւորչին 'ի գայթակղութիւն բազմաց եւ 'ի վնաս ազգին։ միանգամայն խնդրէր իրաւունս, թէ զի՞նչ պատճառ իցեն, զի կամին որոշիլ 'ի հարազատ գլխոյ իւրեանց։ Գրեաց և առ Երուսաղէմացիս, և առ Սսեցիս, եւ աղաչեաց զնոսա մի զհետ լինիլ Եղիազարու՝ ակնկալութեամբ ընդունայն շահու։ Ցղեաց և 'ի Բերիա առ Եղիազար միջնորդ խաղաղութեան զՅովհան վարդապետ Արղնցի, զայրն զգօնամիտ և իմաստուն, և ոչ ինչ օգտեցաւ։

Իբրեւ լուաւ Մարտիրոս վարդապետ Կաֆացի զկաթուղիկոսութիւն Եղիազարու՝ եկ վաղվաղակի յաչխարհէ իւրմէ 'ի Ղրիմայ, դիմեալ 'ի Կոստանդինուպոլիս, խափանել զգործս նորա, որպէս զի առնուցու զվրէժ թշնամութեան նորին։ և զմանապարհայն, ուր և հասանէր 'ի քաղաքս քաղաքս՝ ծանուցանս չարախօսէր զեղիազարէ, և ջանայր հանել զնա յաչաց ամենեցուն։ Եւ իբրեւ եհաս յԵւդոկիա, ետես զի եկեալ էր անդր թուղթ Օրհնութեան յԵղիազարէ և հաւանեալ եւս են ընդ այն գլխաւորք քաղաքին, ընդ որ դժուարեալ յոյժ Մարտիրոսի՝ եկ 'ի բեմն։ և յետ խօսելոյ բազում ինչ զեղիազարէ՝ յաւել ասել։ զօրհնութիւն և զանէծս առն այնպիսւոյ որպէս զառասպելս պառաւանց պարտ է համարել։ Գրեաց ապա և ինքն դիր առ Եղիազար լի անտանելի կշտամբանօք և անլսելի թըշնամանօք։ իսկ յերեսս թղթոյն, ուր դրի հասցէ՝ եդ զանուն պատուոյ Կաթուղիկոսի այսպէս։ « Հասցէ դիրս 'ի Հալապ 'ի ձեռս Եղիազարու Կաթուղիկոսին Հայաստանեայց »։ Եկեալ թղթաբերին 'ի քաղաք անդր՝ հանդիպեցաւ նախ Յովհաննու վարդապետի Արղնցւոյ, և նմա եւ զթուղթն հասուցանել 'ի ձեռս Եղիազարու։ անդ դտաւ և Երեմիա Չէլէպի, և Սուքիաս աշակերտ Եղիազարու։ և զի սոքա անտարակոյս գիտէին՝ թէ բանք նախատանաց կան գրեալ 'ի թղթի անդ 'ի Մարտիրոսէ, չկամեցան տալ զայն Եղիազարու։ Բայց Եղիազար իրազեկ լեալ այսմ՝ խնդրեաց զթուղթն եւ բացեալ սկսաւ ընթեռնուլ յառաջիկայութեան Երեմիայ եւ այլոց։ Իբրեւ եհաս 'ի կէս թղթոյն՝ շառագունեցան երեսք նորա 'ի սրտմտութենէ,